ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/66

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Ջրային կոմիտե
Մասնակից՝ «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Սանթրոսյանի, ներկայացուցիչ՝ Հ. Օհանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով բաց մրցույթ, ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում ՍԿԱԴԱ SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 11.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2454-2022 գրությամբ «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Ջրային կոմիտեի 04.02.2022թ.-ի թիվ 03/17/405-2022 գրության հիման վրա, 11.02.2022թ.-ին «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 11.02.2022թ.-ին:

15.02.2022թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2022/66 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

23.02.2022թ.-ին, 04.03.2022թ.-ին և 11.03.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 04.03.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.03.2022թ.-ին:

2. Ջրային կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Ջրային կոմիտեն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 04.02.2022թ.-ի թիվ 03/17/405-2022 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը՝ ներկայացնում եմ Ջրային կոմիտեի կողմից կազմակերպված ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում ՍԿԱԴԱ SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման աշխատանքների ձեռքբերման ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա ծածկագրով ընթացակարգի

մասնակիցներ «Երվադա» ՍՊԸ-ի և «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ վերաբերյալ տեղեկատվությունը:

Տեղեկացնում եմ, որ ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.01.2022թ. թիվ 2 որոշմամբ արձանագրել է.

1. «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է՝ ընկերության կողմից լրացված և հաստատված ծավալաթերթ-նախահաշիվը և իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները (Հավելված 1.1), ինչպես նաև իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը ներկայացված է թերի (1.3.3 կետում բացակայում է Հայտարարագիրը ներկայացնող անձի ստորագրությունը և հայտարարագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ) (Հավելված 1.3):

2. «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված 1.3) և ներկայացված փաստաթղթերի էլեկտրոնային թվային ստորագրությունները վավեր չեն: Նույն որոշմամբ գնահատող հանձնաժողովը, համաձայն ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.9 կետի, մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը (20.01.2022թ.) և մասնակիցներին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ այն է 21.01.2022թ. ժամը 18:00-ն, շտկել անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովը 25.01.2022թ. թիվ 3 որոշմամբ արձանագրել է, որ սահմանված ժամկետում «Երվադա» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունները չեն շտկվել և ընկերության հայտը մերժվել է:

19.01.2022թ. թիվ 2 որոշմամբ արձանագրված անհամապատասխանության շտկման վերաբերյալ՝ «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ի կողմից արվել է նկատառում, որ հայտով ներկայացված դիմում-հայտարարության մեջ նշված է իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը: Հանձնաժողովի կողմից լրացուցիչ ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված կայքէջի հղմամբ իրական շահառուների վերաբերյալ տեղկությունները բացակայում են: Գնահատող հանձնաժողովը 27.01.2022թ. թիվ 4 որոշմամբ մերժել է «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ի հայտը՝ անհամապատասխանությունը չշտկելու հիմքով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 15.03.2022թ.-ին գրությամբ դիմել է «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2454-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը, ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«03.12.2021թ.-ին ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեն՝ (այսուհետ՝ Պատվիրատու) armeps.am էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ էլեկտրոնային համակարգ) միջոցով հայտարարել է բաց մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ): Մրցույթի հիման վրա ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ «ԱՐԱԶԵՆ» Հ/Ձ ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացրել է հայտ (այսուհետ՝ Հայտ): Հայտի հավելված 1-ի (բաց մրցույթին մասնակցելու դիմում հայտարարության) 2-րդ կետի 2-րդ պարբերությունում՝ որպես Ընկերության իրական շահառուների վերաբերյալ տեղեկություն պարունակող կայքէջի հղում, Ընկերությունը նշել է իր տվյալները պարունակող e-register.am կայքէջի հղումը՝ https://www.e-register.am/am/companies/1322044, քանի որ համոզված էր, որ դա բաց մրցույթին մասնակցելու դիմում հայտարարության 2-րդ կետի 2-րդ պարբերությամբ սահմանված իրական շահառուների վերաբերյալ տեղեկություն պարունակող կայքէջի հղումն է: Մրցույթի 25.01.2022թ.-ի թիվ 3 արձանագրությամբ Հայտը գնահատվել է բավարար և նույն արձանագրությամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցները, այդ թվում՝ Ընկերությունը, 27.01.2022թ.-ի ժամը 11:30-ին հրավիրվել են գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, ինչը Ընկերության մոտ առաջացրել է օրինական ակնկալիք, որ վերջինիս Հայտը համապատասխանում է հրավերի

պահանջներին և ենթակա չէ մերժման: Այնուհետև, 27.01.2022թ.-ի թիվ 4 արձանագրությամբ Պատվիրատուն վերագնահատել է Ընկերության Հայտը և որոշել է այն մերժել: Հայտը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ Ընկերությունը չի շտկել Հայտում տեղ գտած անհամապատասխանությունները:

2.1. Ընկերությունը իր կողմից ներկայացված Հայտի թիվ 1 հավելվածում՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում հայտարարության 2-րդ կետի 2-րդ պարբերությունում՝ որպես Ընկերության իրական շահառուների վերաբերյալ տեղեկություն պարունակող կայքէջի հղում նշել է իր տվյալները պարունակող e-register.am կայքէջի հղումը՝ https://www.e-register.am/am/companies /1322044, քանի որ համոզված էր, որ դա բաց մրցույթին մասնակցելու դիմում հայտարարության 2-րդ կետի 2-րդ պարբերությամբ սահմանված իրական շահառուների վերաբերյալ տեղեկություն պարունակող կայքէջի հղումն է:

2.2. 19.01.2022թ-ի թիվ 2 արձանագրությամբ Ընկերության Հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ արձանագրությամբ նշվել է, որ Ընկերության ներկայացրած հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (հավելված 1.3) և Հայտում առկա փաստաթղթերի էլեկտրոնային թվային ստորագրությունները վավեր չեն: Նշյալ անհամապատասխանությունների վերաբերյալ ընկերությունը ծանուցվել է 20.01.2022թ.-ի ժամը 17:13-ին, որով առաջարկվել է մինչև 21.01.2022թ.-ի ժամը 18:00-ն անհամապատասխանությունները շտկել և ներկայացնել Պատվիրատուին, այսինքն՝ անհամապատասխանությունները շտկելու և Պատվիրատուին ներկայացնելու համար սահմանվել է ոչ թե մեկ աշխատանքային օր, այլ ավելի քիչ ժամանակահատված:

2.2.1. Սույն դիրքորոշման 2.2. կետից երևում է, որ Հայտով ներկայացված թիվ 1 հավելվածում՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում հայտարարությունում (այսուհետ՝ Հավելված 1) հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ չեն արձանագրվել, այսինքն՝ նշյալից հետևում է, որ Պատվիրատուն Հավելված 1-ը գնահատել է հրավերի պահանջներին համապատասխանող, հետևաբար բավարար է գնահատել նաև Ընկերության կողմից Հավելված 1-ով ներկայացված e-register.am կայքէջի հղումը՝ https://www.e-register.am/am/companies /1322044, որն Ընկերությունը ներկայացրել էր իբրև իրական շահառուների վերաբերյալ տեղեկություն պարունակող կայքէջի հղում: Որպիսի հանգամանքներում Ընկերության մոտ առաջացել է օրինական ակնկալիք, որ վերջինս

ներկայացրել է Հավելված 1-ով պահանջվող իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը և այն համապատասխանում է հրավերի պահանջներին:

Բացի այդ, Մրցույթի հրավերի 1-ին մասի 4.3 կետով և 2-րդ մասով նշված չէ, որ մասնակիցը հայտով պետք է ներկայացնի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի:

2.3. Փորձելով կատարել 19.01.2022թ-ի թիվ 2 արձանագրությամբ և 20.01.2022թ.-ի ժամը 17:13-ի ծանուցմամբ՝ Հայտը մինչև 21.01.2022թ.-ի ժամը 18:00-ն շտկելու վերաբերյալ պահանջը՝ Ընկերությունը Հայտով ներկայացված բոլոր փաստաթղթերը նորից էլեկտրոնային թվային եղանակով ստորագրել է և 21.01.2022թ.-ի ժամը 13:55-ին ուղարկել է Պատվիրատուին իսկ իրական շահառուների վերաբերյալ հայտարարգիրը (հավելված 1.3) ներկայացնելու պահանջին պատասխանել է, որ իր կողմից ներկայացված Հավելված 1-ում նշված է իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ https://www.e-register.am/am/companies /1322044, նշյալ պատասխանը հիմնականում պայմանավորված է եղել նրանով, որ 19.01.2022թ.-ի թիվ 2 արձանագրությամբ գնահատելով Հայտը Պատվիրատուն կայքէջի հղման վերաբերյալ որև է անհամապատասխանատվություն՝ հրավերի պահանջների նկատմամբ չի արձանագրել, ինչը Ընկերության մոտ ստեղծել է այնպիսի տպավորություն, որ այդ հղումը ներկայացնելով վերջինս ներկայացրել է Հավելված 1-ով պահանջվող իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը և այն համապատասխանում է հրավերի պահանջներին:

2.4. Գնահատելով Ընկերության կողմից 21.01.2022թ.-ի ժամը 13:55-ին Պատվիրատուին ուղարկված շտկված հայտը՝ Պատվիրատուն 25.01.2022թ.-ի թիվ 3 արձանագրությամբ նշել է, որ 21.01.2022թ.-ի դրությամբ ընկերության հայտում տեղ գտած անհամապատասխանությունները շտկվել են, այսինքն՝ թիվ 3 արձանագրությամբ Ընկերության հայտը գնահատվել է բավարար: Նույն արձանագրությամբ Պատվիրատուն 27.01.2022թ.-ի ժամը 11:30-ին հրավիրել է Ընկերությանը գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների: Սակայն, 27.01.2022թ.-ի ժամը 12:00-ի թիվ 4 արձանագրությամբ ընկերության հայտը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ Ընկերությունը չի շտկել Հայտում տեղ գտած անհամապատասխանությունները, մասնավորապես՝ նույն արձանագրությամբ նշվել է, որ լարցուցիչ ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ https://www.e-register.am/am/companies/1322044 կայքէջի հղմամբ իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝

«1. Եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն:

3. Մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:»

Վերոգրյալից հետևում է, որ եթե մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա պատվիրատուն հայտերի բացման և գնահատման նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնում է և նույն օրը էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին առաջարկելով՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը հայտում տեղ գտած անհամապատասխանությունները շտկել: Ընդ որում շտկված հայտը մասնակիցը պատվիրատուին է ուղարկում էլեկտրոնային փոստի միջոցով: Հաշվի առնելով նշյալ հանգամանքը կարող ենք եզրահանգել, որ շտկված հայտը գնահատող հանձնաժողովին կարող է ուղարկվել մինչև կասեցման ժամկետի՝ օրվա ժամը քսանչորսը, քանի «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև

ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը իսկ նույն հոդվածի 3-րդ մասի հաաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

Վերոգրյալից հետևում է, որ պատվիրատուն հայտը շտկելու համար ժամանակահատված սահմանելիս այն պետք է սահմանի այնպես, որ շտկված հայտը ներկայացնելու համար ժամանակահատվածը լինի մինչև հայտը շտկելու վերաբերյալ ծանուցումը մասնակցին ուղարկելու օրվան հաջորդող օրվա ժամը 24:00-ն: Այսինքն՝ մասնակիցը իրավունք ունի շտկված հայտը էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել պատվիրատուին մինչև հայտը շտկելու վերաբերյալ ծանուցումը ստանալու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ժամը 24:00-ն:

Ինչպես երևում է սույն գործի փաստերից, Պատվիրատուն 20.01.2022թ.-ի ժամը 17:13-ին Ընկերությանը ծանուցել էր Հայտում հրավերի պահանջների նկատմամբ առակա անհամապատասխանության մասին: Նույն ծանուցմամբ հայտը շտկելու ու շտկված հայտը էլեկտրոնային փոստի միջոցով Պատվիրատուին ներկայացնելու համար վերջնաժամկետ էր սահմանվել 21.01.2022թ.-ի հունվարի 25-ի ժամը 18:00-ն: Այսպիսով, նշյալից կարող ենք փաստել, որ Պատվիրատուն խախտել է վերը նշված իրավական ակտերով սահմանված նորմերը, քանի որ շտկված հայտը ներկայացնելու համար սահմանել է մեկ աշխատանքային օրվանից քիչ ժամանակահատված: Մասնավորապես՝ 21.01.2022թ.-ի ժամը 24:00-ի փոխարեն շտկված հայտը ներկայացնելու ժամանակահատված է սահմանվել մինչև 21.01.2022թ.-ի ժամը 18:00-ն:

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից Ընկերության հայտը մերժվել է վերագնահատման արդյունքում, որպիսի ընթացակարգ «Գնումների մասին» ՀՀ օրենքով և այդ օրենքի իրականացումն ապահովող ենթաօրենսդրական իրավական ակտերով սահմանված չէ: Մասնավորապես՝ 27.01.2022թ.-ի թիվ 4 արձանագրությամբ վերագնահատելով Ընկերության Հայտը Պատվիրատուն այն մերժել է՝ պատճառաբանելով, որ Ընկերությունը չի շտկել Հայտում տեղ գտած անհամապատասխանությունները, մասնավորապես՝ նույն արձանագրությամբ նշվել է, որ լարցուցիչ ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ https://www.e-register.am/am/companies/1322044 կայքէջի հղմամբ իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է: Մինչդեռ Հայտում տեղ գտած անհամապատասխանությունները արձանագրվել են Մրցույթի 20.01.2022թ.-ի թիվ 2 արձանագրությամբ, որտեղ Հայտով ներկայացված Հավելվա 1-ում, այդ թվում՝ Հավելված 1-ով ներկայացված կայքէջի հղման մասով հրավերի պահանջների

նկատմամբ անհամապատասխանություններ չեն արձանագրվել: Բացի այդ, եթե Հավելված 1-ով ներկայացված կայքէջի հղումը չէր համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, ապա Պատվիրատուն պատք է ղեկավարվեր Կարգի 41-րդ կետով և Հավելված 1-ում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելով՝ պետք է պահանջ էր Ընկերությունից որպեսզի վերջինս շտկի այդ հավելվածը: Մինչդեռ Պատվիրատուն նման պահանջ Ընկերությանը չի նեկայացրել, որպիսի հանգամանքը Ընկերության մոտ առաջացրել է օրինական ակնկալիք առ այն, որ վերջինս ներկայացրել է Հավելված 1-ով պահանջվող իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը և այն համապատասխանում է հրավերի պահանջներին:

Վերոգրյալից կարող ենք փաստել, որ Ընկերության Հայտը մերժվել է խախտելով Կարգի 41-րդ կետը, քանի որ Պատվիրատուն վերը նշված պատճառաբանությամբ Հայտը մերժել է այն պայմաններում, երբ Ընկերությունը չի ծանուցվել Հավելված 1-ում տեղ գտած անհամապատասխանատվության և այդ անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

Հարկ է նշել, որ 19.01.2022թ.-ի թիվ 2 արձանագրության հիման վրա արված 20.01.2022թ-ի ծանուցմամբ՝ Պատվիրատուն որպես Հայտի շտկում Ընկերությունից պահանջել է ներկայացնել հրավերին կցված թիվ 1.3 հավելվածը, սակայն Ընկերությունը այդ պահանջին ի պատասխան նշել է, որ իր կողմից ներկայացված Հավելված 1-ում նշված է իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ https://www.e-register.am/am/companies /1322044: Արդյունքում՝ 25.01.2022թ.-ի թիվ 3 արձանագրությամբ Ընկերության Հայտը (շտկված Հայտը) գնահատելով՝ Պատվիրատուն եզրահանգել է, որ այն 21.01.2022թ.-ի ժամը 18:00-ի դրությամբ համապատասխանում է հրավերի պահանջներին: ՈՒստի 25.01.2022թ.-ի թիվ 3 արձանագրությամբ Ընկերության Հայտը գնահատվել է բավարար՝ որպես հրավերի պահանջներին բավարարող:

Բացի այդ, Մրցույթի հրավերի 1-ին մասի 4.3 կետով և 2-րդ մասով նշված չէ, որ Ընկերությունը Հայտով պետք է ներկայացնի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի:

Ամփոփելով վերոգրյալը կարող ենք փաստել, որ սույն ընթացակարգը նախաձեռնվել է ոչ թե այն պատճառով որ Ընկերությունը խախտել գնման գործընթացում ստանձնած պարտավորություն, այն նախաձեռնվել է որովհետև Պատվիրատուն Մրցույթի հայտերի բացման և գնահատման գործընթացը կազմակերպել է վերոգրյալ իրավական նորմերի խախտմամբ, որն Ընկերությանը գցել է թյուրիմացության մեջ:»:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ամբողջությամբ մերժել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-LO-2022/66 ծածկագրով ընթացակարգը:

4. <u>ՍՑ-LO-2022/66 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Ջրային կոմիտեի կողմից ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում ՍԿԱԴԱ SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով 03.12.2021թ.-ին հայտարարվել է «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 19.12.2021թ.-ին նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված 1.3), ինչպես նաև հայտում առկա փաստաթղթերի էլեկտրոնային թվային ստորագրությունները վավեր չեն:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.9 կետը, որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «Արազեն հայ-գերմանական» ՀՁ

ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 21.01.2022թ.-ը ժամը 18:00-ը, շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 21.01.2022թ.-ին ժամը 17:13-ին armeps.am համակարգի միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել Մասնակցի էլ. փոստի հասցեին:

vii. Հանձնաժողովի 25.01.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ի Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկումները կատարվել են:

viii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.6 կետը, որոշել է այդ թվում նաև «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, որը տեղի է ունենալու 27.01.2022թ.-ին ժամը 11:30-ին:

ix. Հանձնաժողովի 27.01.2022թ.-ի թիվ 4 արձանագրության համաձայն՝ անհրաժեշտություն է առաջացել հրավիրել արտահերթ նիստ՝ «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտության համար:

x. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը կատարված ուսումնասիրության արդյունքում որոշել է Մասնակցի կողմից ներկայացված հայտը մերժել՝ 19.12.2021թ.-ին նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու հիմքով, այն պատճառաբանությամբ, որ «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ի կողմից 21.01.2022թ.-ին ժամը 13:55-ին (անհամապատասխանությունների շտկման վերջնաժամկետ՝ 21.01.2022թ.) ներկայացվել է շտկված փաստաթղթերը, որում բացակայել է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2454-2022 գրությամբ «Արազեն հայ-

գերմանական» ՀՁ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը,

բ. իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

գ. ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

թ. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող

իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Նույն կետի 21-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը գերազանցում է յոթանասունհինգ չափաբաժինը, ապա հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի

ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ջրային կոմիտեի կողմից ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում ՍԿԱԴԱ SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով 03.12.2021թ.-ին հայտարարված «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով բաց մրցույթի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյուն¬քում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու

ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ջրային կոմիտեի կողմից ոռոգման համակարգերի մայր և երկրորդ կարգի ջրանցքների բաժանարար կետերում ՍԿԱԴԱ SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումների տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով 03.12.2021թ.-ին հայտարարված «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 19.12.2021թ.-ին նիստի թիվ

2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված 1.3), ինչպես նաև հայտում առկա փաստաթղթերի էլեկտրոնային թվային ստորարությունները վավեր չեն, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 21.01.2022թ.-ը ժամը 18:00-ը, շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից 21.01.2022թ.-ին ժամը 17:13-ին armeps.am համակարգի միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել Մասնակցի էլ. փոստի հասցեին: Հանձնաժողովի 25.01.2022թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ի Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկումները կատարվել են, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, որը տեղի է ունենալու 27.01.2022թ.-ին ժամը 11:30-ին: Սակայն Հանձնաժողովի 27.01.2022թ.-ի թիվ 4 արձանագրությամբ Հանձնաժողովը հրավիրել է արտահերթ նիստ՝ «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտության համար, որից հետո որոշել է Մասնակցի կողմից ներկայցված հայտը մերժել՝ 19.12.2021թ.-ին նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու հիմքով, այն պատճառաբանությամբ, որ «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ի կողմից 21.01.2022թ.-ին ժամը 13:55-ին (անհամապատասխանությունների շտկման վերջնաժամկետ՝ 21.01.2022թ.) ներկայացվել է շտկված փաստաթղթերը, որում բացակայել է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված **մեկ աշխատանքային օրյա ժամկետում**: Ընդ որում, օրերով հաշվարկվող ժամկետը լրանում է այդ ժամկետի վերջին օրը, իսկ եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն («Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք 31-րդ և 32-րդ հոդվածներ):

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանն իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ 02.04.2014թ.-ին կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ հայտնել է, որ իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը:

Սահմանադրական դատարանի մեկ այլ 18.04.2014թ.-ին կայացրած թիվ ՍԴՈ-1148 որոշմամբ, գտել է, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը: Փաստն այն է, որ վեճի առարկա իրավահարաբերությունների շրջանակում խախտվում է անձի օրինական ակնկալիքների իրավունքը:

Սահմանադրական դատարանը 18.04.2006թ.-ին կայացրած թիվ ՍԴՈ-630 որոշմամբ, մասնավորապես, արձանագրել է, որ օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես

նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար, սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պատվիրատուն և Հանձնաժողովը գնման գործընթացի մասնակիցների հայտերի գնահատումն իրականացնելիս չպետք է վերջիններին ծանրաբեռնեն այնպիսի պարտականություններով, որոնք ուղղված են ձևական պահանջների պահպանմանը, կամ, առավել ևս, մերժեն

ներկայացված հայտերը, եթե մասնակիցների վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովը կիրառելով Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերը, այն է՝ ծանուցել է Մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը, այն է՝ 21.01.2022թ.-ին ժամը 18:00-ը, շտկել առկա անհամապատասխանությունները, գործել է ոչ իրավաչափ, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով և Ջրային կոմիտեի կողմից հայտարարված «ՋԿ-ԲՄԱՇՁԲ-22/3-Ա» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված չէ որևէ դրույթ՝ գնահատող հանձնաժոովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկման համար նախատեսված մեկ աշխատանքային օրվա ժամանակային սահմանափակման մասին, որպիսի պայմաններում գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է Կարգով և Հրավերով սահմանված և Մասնակցին ընձեռնված շտկման հնարավորության ժամանակահատվածը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումն ոչ իրավաչափ է և չի բխում Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերով սահմանված պահանջներից:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2454-2022 գրությամբ «Արազեն հայ-գերմանական» ՀՁ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2022/66 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**